ԱՐՄԵՆԻԱ

ԼՒԱԳԻՒ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկանաւան հասար տարեշրջանը 5 ֆր. կամ 2 բբլ. ռս. թղթդրմ.

Ցարիշ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 10րդ շրջանի (94 օգոստ.—95 մայիս) բաժնորդագրին է 20 ֆր. կանխիկ։ Կարելի է նաեւ բաժնորդագրուիլ քանի ամսի համար ալ որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ ֆր. հաշուելով և 1895 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Ա ՏԱՐԻ ԹԻԻ 65

1895 ՄԱՐՏ 16

1895 ՄԱՐՏ 4 (Հ. Տ.)

ԳԱՆՁ

Աշխատակազմ՝ Հ. Ճըմչ. օրեր

ՊԱՏՄԱՆԵՆԻՔ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրուածքները։ Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։ Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։ Յանուցման 1 միլիմ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 3 սանտիմ։

Les annonces en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

19.3.95
8-9 V

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ճշմարտութիւնը Հայաստանի մասին — Քննիչ յանձնաժողովը. — Ամեն. Իզմիրլեան պատրիարքի յիշատակագիրը.— Տիար Մ. Զերազ ի Նահսք. — Բադիշի Թահսին փաշան։ — Անկարգութիւններ Տիգրանակերտի մէջ. — Կիլիկիահայ լուրեր.— Հայեր ի Թիւրքիա. — Ռուսբրքական սահմանագլխին վրայ. — Ռուսիա ու՛լ անցագիր չտար Թիւրքիացի Հայ պանդուխտներին. —Թիւրքիահայ լուրեր։ —Նամակ Պրազիլիահայ (Գոռուզ Այրա).— Յանուցումներ։

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Զարհուրելի մանրամասնութիւններ. կոտորածէն ազատուողներ՝ յանձնաժողովին առջեւ.
Վկայների յայտնութիւնները։

«Տիլի Թելիկրաֆ» մարտ 11ի թիւին մէջ կը հրատարակէ իր յատուկ թղթակցի հետեւեալ հեռագիրը, որ Մուշէն գրուած եւ կարսի ճամբով Լոնտոն հասած է շաբաթ առաւօտ (մարտ 9)։

Սասունի կոտորածէն փախչելով ազատ մնացածներէն ընտրուած մի պատուիրակութիւն ներկայացաւ յանձնաժողովին և սրածութեան ամբողջ պատմութիւնն ըրաւ. միեւնոյն ժամանակ պատուիրակներին հաղորդեց մի տեղեկագիր որի մէկ օրինակն ալ ինծի տրուեցաւ։ Այս պատուիրակութիւն կը բաղկանայ 14 հոգիէ, որոնց մէջ են Գրիգորի որդին Սագօ և կէլիկուզանցի Պետրոս քահանան։ Հետեւեալը այդ յիշատակագրի ճշդրիտ թարգմանութիւնն է, որ վկայների յայտնութիւններին ալ համաձայն է։

«*Մենք դիւղացիներս, տուրք կը վճարէինք ոչ միայն Թիւրքերին, այլ և առաւելապէս Քիւրտերին, որոնք տարուէ տարի իրենց տաւարներովը ու վրաններով կուգային մեր լեռները և մեզմէ կ'ստանային ոչխար, կով, ձի, կաթ, պանիր — մէկ խօսքով՝ մեր բոլոր ունեցածի մէկ մասը։ Բայց որովհետեւ անցած տարի բան մը չունէինք, մենք ալ բան մը տալ չուզեցինք։*

Բագրանցի ցեղը որ տուրք կը հաւաքէր Սէմալ և Շէնիք գիւղերէն, մերժողական պատասխան ստանալով, յարձակեցան և դաշտը գտնուած բոլոր ոչխարներն ու տաւարները քշեցին տարին։

Գիւղացիները գանգատեցան Թիւրք գնդապետին, որ 200 զօրքով բանակած էր գիւղին մօտը։ Գնդապետը չուզեց զօրք տալ որ գիւղացիներին տաւարը վերադարձնելու օգնեն. ասոր վրայ գիւղացիները ղէնք առին և Քիւրտերին ետեւէն լինկան։ Երկարատեւ մի կռուէ յետոյ, իրենց տաւարը ետ առին, բայց կռուին մէջ 2 Քիւրտեր սպաննուեցան։ Ասոնց դիակը բանակատեղ տարուեցաւ և անկէց ալ գնդապետը Մուշ փոխադրել տուաւ, զեկուցանելով թէ գիւղացիները ապստամբեցան, իր առջեւ Քիւրտերը սպաննեցին և հաւանօրէն կայսերական զօրքերուն վրայ ալ պիտի յարձակին։

«*Մենք առաջուց տեղեկացանք որ մեր վրայ յարձակելու պատրաստութիւն կը լինի Մուշի մէջ. վասնզի բաւական Քիւրտեր մեզի ըսին որ զիրենք մեզի դէմ գրգռելու չանքեր եղած էին։ Մէկ շաբաթ վերջ տեսանք որ Շէնիք և Սէմալ գիւղերին վրայ ամեն կողմէ զօրք կը վազէ. ուստի հարկադրուեցանք մեր դիւղեր թողնելու և կէլիկուզան փախչելու։ Բայց Քիւրտ ցեղեր հոն ալ յարձակեցան և գիւղապետին տունը հրկիզեցին։ Ասոր վրայ, սարսափած գիւղացիները փախան ապաստանեցան Անտոք լեռը, ուր ծնացին 15 օրի չափ, որմէ վերջը պաշարուեցանք զօրքերէն։ Յետոյ կառավարութեան կողմէն երկու պատգամաւորներ եկան մեզ վստահացնելու թէ զօրքերն եկած էին սոսկ Քիւրտերին հետ մեզ հաշտեցնելու, մեզ պաշտպանելու և մեզ մեր դիւղերը դարձնելու համար։ Մենք ալ այդ պատգամաւորներէն խոսածը ճշդելու պաշտօնով երկու մարդ ղրկեցինք, որոնք են Պետրոս և Մովսէս։*

«*Այդ ժամանակ բանակը կէլիկուզան էր։ Մեր մարդիկ սիրով ընդունեցան հրամանատար պաշտօնատարէն, որ զանոնք վերադարձուց յայտարարելու համար թէ կառավարութիւնը չպիտի ջնասէ անձնատուրներին, բայց պիտի պատժէ յամառողները։ Մեր մարդիկ եկան և այս տարեր լուրը տարածեցին, աւելցնելով թէ՝ կործանուած երեք դիւղերն ալ — Շէնիք, Սէմալ, Կէլիկուզան — պիտի վերաշինուին և թալնուած ինչքերն ալ պիտի վերադարձուին։*

Ասոնք լսելով, Սէմալի Յովհաննէս քահանան 300ի չափ անձերով դնաց բանակատեղը և այնտեղ լաւ ընդունելութիւն դտաւ։ Այս բանը կէսօրէն մէկ ժամ վերջ տեղի կունենար։ Ասոնցմէ լանդրեցին որ մէկ քանի ժամ սպասեն բանակատեղը։ Միեւնոյն ատեն զօրքերը զրաված էին մի մեծ հոր փորելու, գիւղապետ Պետոյի տան ետեւի կողմը։ Ժամը վեցին ատենները Յովհաննէս քահանան կանչուեցաւ և խաչն ու Աւետարանը անոր ոտքին առջեւ ձգուելով Թիւրք պաշտօնակալին կողմէն հրաման եղաւ որ կոխկռտէ զանոնք։ Քահանան մերժեց այս բանը և պաշտօնակալին հրամանով զօրքերուն իր աչքերը հանեցին, յետոյ ձեռքը թաշկինակ տուին և հրամայեցին որ կաքաւէ։ Այնուհետեւ հայերը յանձնուեցան զօրքերուն ձեռքը և սուիններով սպաննուեցան և մեռած կամ մեռնելու մօտ վիճակի մէջ այն մեծ փոսի մէջ նետուեցան։ Ասոնցմէ մին, Աւագ անունով մի վաճառական, հրաշքով փախաւ, և ահա գինքը այս տեղ բերինք որ Ձեր աչքերով տեսնէք։

«*Ուրիշ մէկ հոգի ևս, Շէնիքցի Բիա Օհան Զօրօեան, որ սուինի 12 վերք ստանալով յաղողած էր փախչելու, այստեղ ներկայ է այժմ։*

«*Անդին Անտոք և Քեբին լեռները վրայ ծնացող գիւղացիները այս 300 հոգիների վիճակէն բոլորովին անտեղեակ էին, որովհետեւ Պետրոս և Մովսէս չարունակ կը յայտարարէին ամեն կողմ թէ բանակատեղին մէջ ամենքն ալ լաւ ընդունուած են, թէ իրենց գիւղեր խրկուած են և թէ դրամական նուէրներ առած են։ Գիւղացիները այս բանը լսելով փութացին անձնատուր լինելու և չարդուեցան իրենց կիներուն և զաւակներուն հետ։*

«*Անկէ վերջը, զօրքերն սկսան դէպի լեռ բարձրանալ և բոլորը դտած՝ նին սրէ անցուցել։ Սակաւաթիւ անձեր փախան դէպի Շիանք, Էնկօղլաք և կէղիմ գիւղերը և ուրիշ տեղեր, և ահա այս փախստականներն են ինչ որ ողջ մնացած է Սասունցիներէն։*

«*Ցալտրիկցիները Քիւրտերի դէմ մեր կռուին չէին մասնակցած. ուստի ապահով էին թէ հանդիստ պիտի թողուին. բայց այդ դիւղացիներն ալ գիշերանց յարձակում կրեցին, ամեն կողմէ թնդանօթի բռնուեցան և ամբողջ գիւղը այրուեցաւ։ Հազիւ 20 հոգի փախաւ, մնացածները բոլորն ալ ջարդուեցան։*

«*Մենք այդ բոլոր գիւղերի ճիշդ անուանները և հրկիզուած տուներին թիւը գիտենք և Ձեզի կուտանք և Ձեզ կը թախանձենք որ անձամբ գալով Ձեր աչքերով տեսնէք։*

«*Մենք այսչափ միայն կ'ուզեցինք թէ այս ամեն բանը գործողները Քիւրտերը չէին. ընդհակառակն, Քիւրտերը՝ մէկ քանի ցեղէ զատ, մեզի բարեկամ են. անոնք աչխատեցան որ այս կոտորածն ընող զօրքերին դէմ մեզ պաշտպանեն։*

«*Այրուած տուներուն թիւն է 1357, բացի 16 եկեղեցիներէ և 8 դպրոցներէ։ Այս ամեն գիւղերի մէջ հիմա մնացած են մի քանի ուխտատեղ ողորմելիները։*»

Այս տեղ ստորագրած են 14 անձեր որոնց ամենէն առաջինն է Գրիգորի որդին Սագօ և վերջինն է Աբրահիմ կուրտիյօ։

Այս գրութիւն և զայն պատրաստողներուն վկայութիւնը խոր տպաւորութիւն ըրին պատուիրակներին վրայ։

Մի ուրիշ թղթակցութիւն,
շաբաթ կէսօրին Կարսէն հեռագրուած

Ազդուապէս հերքեցէք այն լուրը թէ Հայերը գրգռած ըլլան Սասունի ջարդը։ Երբէ՛ք այս բանը հաստատող մարդ չը կայ այստեղ։ Ջանջախիչ փաստեր ունիմ որ այդ լուր բոլորովին սուտ է։ Ես և իմ օգնականներս, վերջին եօթը շաբաթուան մէջ քննած և հարցուփորձած ենք 200է աւելի անձեր, որոնք կոտորածին ականատես կամ մասնակից եղած են։ Ասոնց անուանները, հասցէները, տարիքները, տեղեկութիւնների միջոցները և կարեւոր պարագաների մէջ ալ ոմանց լուսանկարներն առած եմ և ահա ձեր ղրկեմ Ձեզի։ Հաւաքուած տեղեկութիւնները կատարեալ պէս համաձայն են և բազմաթիւ անուղղակի փաստերով ալ կը հաստատուին։ Ասոնցմէ զատ, առած ենք նաեւ չէզոք մնացած Թիւրք պաշտօնատարներու և վայրենի Քիւրտերի վկայութիւնները։ Դժբաղդաբար Թիւրք վկաները յաճախ գինով են, մինչդեռ Քիւրտերը

…սրտութիւնը կը պատմեն խելքեր…

…գլուխնին, աներկիւղ կերպով և …րծանք ալ զգալով։ Իմ դաշոյնս …խանակեցի մի արիւնռուչտ Քիւրտի դաշունին հետ, որով Սասունի մէջ շատ անմեղ կիներ և տղայներ սպանած էր։ Այդ Քիւրտի ըրած յայտնութիւնները, ոչ-հայազգի պատուաւոր վկաներէ ներկայութեամբ գրի առած եմ և ամենքը միասին կը ղրկեմ Ջեզմի։

Միչեալ Քիւրտը իր տեսած ուրիշ բաներէ հետ հետեւեալն ալ հաղորդեց մեզի.

«Թիւրք զօրքերը փոքրիկ տղաները բռնելէն իրենց ոտքէն և քարէ քար զարկին։ Տեսայ մի հայ քահանայ։ Զինուորները անիկա տանջեցին, վիզը սեղմեցին, աչքերը հանելէն և ածցանով (քէլբէթին) միսերը փըրցուցին։ Մենք այս բաները կատենք. մենք միայն դաշունով կամ սուրով կը մեռցնենք և կամ գլուխ կը կտրենք։ Աւելորդ ցաւ պատճառել չենք սիրեր։

«Տեսայ մի Թիւրք յիսնապետ որ մի ծերուկ Հայ կախեց գլխիվայր, երկու երեք ճիւղէ, և յետոյ կացինով կամաց կամաց կտրեց անոր մարմինը։

«Այն Հայեր որոնք զօրքերէն պաշտպանութիւն խնդրեցին և անձնատուր եղան, գիշերով սրէ անցան։ Ես աչքովս տեսայ այս բանը։ Զինուորները երկու կարգի շարուեցան, ամեն կողմը երեքական հոգի։ Հայերն ասոնց մէջէն անցան, ձեռքերնին կապուած, և յետոյ սուիններով յարդարեցան ու փոսը նետուեցան։ Փոսը նետուողներուն ամենքը մեռած չէին։

«Տեսայ մէկ յոգի կին զինուորներուն ձեռքը։ Ասոնք կինոջ բոլորտիքը պատած, կատակաբանութիւններ կընէին և երեխայի սեռին վրայ իրար հետ դրաւ կը բռնէին։ Ցետոյ այս կինոջ արգանդը կարեցին բացին և գրաւի դրամը վճարեցին այն թշուառականի որի գուշակութիւնը ճիշդ ելաւ (1)։

«Քիւրտերը հրացանի գնդակով կամ դաշունի հարուածով կ'սպանէին, բայց զօրքերը՝ չարչարելէ հաճոյք կզգային։ Անոնք մկրատով ոմանց վզի երակները բացին, կըրտեցին և այնպէս մեռցուցին։ Ոմանց մարմինը սղոցեցին և ոմանց ալ լեզուն դուրս քաշեցին, աչքերը փորեցին և մտանելէն մէկ քանին իրարմէ անջատեցին, գանոնք սպաննելէ առաջ։ Ա.յս կերպով անդամատուած այրեր և կիներ տեսայ, որոնք մեռնելէ առաջ երկու ժամ թողուեցան բանակատեղը։

«Հայերին մօտ մինակ 12 հրացան տեսայ. անոնք ալ չափահասները տեսակէն»։

Ա.յս Քիւրտ կը պատկանի ամենավայրագ ցեղերէ մէկին և իրեն ա…

(1) Մեր Թղթակից այս քաջամեալ գործի մանրամասնութիւնները հեռագրած է, բայց մենք դիտմամբ զանց ըրինք ատոնք, որովհետեւ չհրատարակուելու չափ ահաւոր են։

Խմբ. «Տիլլի Թելեկրաֆ»ի։

…նունը, լուսանկարը և զէնքը կը ղրկեմ Ջեզմի։

Կոտորածի ճշմարտութեան մասին Թիւրք պետական պաշտօնեաներ Թիւրք պետական պաշտօնեաներ կը պատճառեն տեղական իշխանութիւններուն, որոնց Հայրայեղութիւններն երեւան ելած են կարինի մէջ և ուրիշ տեղեր։ Հրաման տրուած է որ հիմա կարինի գտնուող հետեւակների 25րդ զօրաբաժինը փոխադրուի այնպիսի մի քաղաք ուր օտարականներ չեն բնակիր։

Վկայութիւններ առինոյնպէս բազմաթիւ աղբիւրներէ և հարսերէ որոնք գաղանային բռնութեան ենթարկուած էին և յաջողեցայ ատոնց մին ազատելու իր բռնաւորի ձեռքէն։ Ոնուններնը, թուականները և մանրամասնութիւնները յետոյ։

Ամեն նամակներ կը բացուին, նոյն իսկ հիւպատոսներուն պաշտօնական նամակները, որոնց դրոշմակնիքներն ալ կը խզուին։ Ջիս վստահացուցին թէ հիւպատոսներէ մին պաշտօնապէս բողոք ժատուցած է։

Խնուսի կողմը տակաւին կը յուզուի այն անհեթեթ լանքերի պատճառով որ իշխանութիւնները կը շարունակեն ժողովրդին ստիպելու համար որ Քիւրտերի և յեղափոխականների դէմ Թիւրք կառավարութեան ընծայած պաշտպանութեան մասին չնորհակալութեան թուղթեր ստորագրեն։ Ժողովուրդը մերժած է ստորագրել, բայց գայմագամը անձամբ կ'աշխատի զանոնք համոզելու։ Շատեր բանտարկուած են։

Լուրեր տարածուեցան թէ Բալուի մէջ խռովութիւն ծագած է բայց կրնամ ձեզի հաղորդել ինչ որ պատահած է այնտեղ։ Տեղական իշխանութիւնները մի անհիմն լուր ստանալով թէ Բալուի Հաւաս դիւղին Հայերը զէնք պահած են, այնտեղ լըրկեցին հինգ հեծեալ ոստիկան և տասը Քիւրտ, որոնք իրենց ձիերի հետ մէկտեղ տեղաւորուեցան գիւղին մէջ։ Հայերը զէնք պահած չունէին. բայց բնականաբար կը գրգռուին որ իրենց ունեցած չունեցածը ձախսկու կ'ըսուին։ Ուրիշ խռովութիւն չէ պատահած ցարդ։

ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

«Տիլլի Թելեկրաֆ»ի մէջ կը կարդանք։

Մուշի քննիչ յանձնաժողովէն հասած լուրերուն նայելով, մէկ քանի Քիւրտեր քննուած են, թէեւ առանց կարեւոր արդիւնքի։ Յանձնաժողովը այժմ կարծնէն կ'սպասէ մէկ քանի Սասունցի վկաներու։ Նախորդ 12 նիստերուն ատենագրութիւնները ղըրկուած են։ Ատոնք կը պարունակեն դէպաւորապէս Թիւրք վկաներու յայտնութիւնները, որոնք արդէն ծանօթ են, բայց աւելի մանրամասնութեամբ կը պատկերացնեն այն դէպքերը որոնք Հայերին Անտոք լեռնէն ցրուելէն առաջ տեղի ունեցած են։

Այդ լերան վրայ էր որ Հայերը ապաստանեցան Թիւրք զօրքերի ձեռքէն փախչելով և ուր մէկ քանի օր տաք կռիւներ չարունակուեցան և յետոյ կատարուեցաւ Ղարդը։ Թիւրք իշխանութիւններն այլ եւս արգելք չեն դներ օտար պատուիրակներուն ձեռքով վկաներու քննութեանը դէմ։

—«Տիլլի Թելեկրաֆ»ի մարտ 11ի թուին մէջ կը կարդանք Մուշեն իր թղթակցէ տրուած հետեւեալ հեռագիրը։

Մուշի մէջ յանձնաժողովը շատ ծանր կը գործէ։ Ամենքը 28 վկաներ միայն քննուած են տակաւին և մինչեւ մարտ 4 մի երկրորդ թղթատար չը ղրկուեցաւ դեռ, որովհետեւ եւրոպական պատուիրակները առանց քարտուղարի են և միայն մէկ թարգման ունին։ Անոնց օգնելու համար քիչ օրէն մի նոր թարգման պիտի ղրկուի։

Յանձնաժողովը այն կէտի հասած է որ Թիւրք զօրապետներուն գործերը պիտի հարցաքննէ։ Թարգմանը իր պարտք կատարելու կը վախնայ։

Թիւրք քննիչներին և եւրոպական պատուիրակներուն միջեւ շատ անհամաձայնութիւն ծագեցաւ, որովհետեւ Թիւրք քննիչները տարօրինակ միջոցներու կը դիմեն, անպատիւ վկայներ կը լսեն և լաւ վկայներուն դէմ չարախօսութիւններ ստեղծելով ժամանակ կը վատնեն։ Պատուիրակներն այս բաներուն դէմ նեղանալով բողոքեցին և Թիւրք քննիչները վախնալով որ մի՛ գուցէ պատուիրակները գործէ քաշուին — ինչպէս որ ըրին մինչեւ որ պաշտօնանկ եղաւ Պիթլիսի նախկին նահանգապետ Թահսին բան —, հետզհետէ հաճոյակատար կը դառնան։ Հիմա Թիւրք քննիչներուն գլխաւոր ճիգն է՝ պատասխանատուութիւնը Քիւրտերուն վրայ ձգել։

— Կ.պոլսէն հեռագրած են անգլիական լրագիրներուն անցած չարաթ օր թէ՝ որովհետեւ Քննիչ յանձնաժողովին ներկայացող վկաներէն չատը հայերէն միայն գիտեն, անգլիական, ռուսական և ֆրանսական դեսպանատուններն որոշած են հայերէն խօսող թարգմաններ ղրկել Մուշ։

ԱՄԵՆ. ԻԶՄԻՐլԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐԸ

Թիւրքիոյ Հայերուն վիճակին նկատմամբ Ամեն. Իզմիրլեան Սրբազանին վերջերս Սուլթանին ղրկած յիշատակագիրը Միւնիր պէյլ ձեռքով վերադարձուեր է Նորին Ամենապատուութեան։ Միւնիր պէյ խնդրեր է որ յիշատակագիրը աւելի մեղմ լեզուով գրուի և Սուլթանի գթութեանն ու արդարասիրութեանը վրայ վստահութիւն յայտնէ։ Սակայն Պատրիարք Սրբազանը որոշեր է Միւնիր պէյին վերադարձնել յիշատակագիրը առանց փոփոխութեան։

ՏԻԱՐ Մ. ՉԵՐԱԶ Ի ՆԱՆՍԻ

Բրօֆէսէօր Տիար Մինաս Չերազ որ ինչպէս յայտնի է, Անգլիա զանազան քաղաքները պարտէզով բանախօսութիւններ կընէ Հայերի անցեալ և ներկայ վիճակին վրայ և Հայկական խնդիրը կը ծանօթացունէ անգլիացի ժողովրդին, անցեալ շաբաթ Ֆրանսա անցեր և մարտ 8ի դիշերը Հայաստանի մասին մի բանախօսութիւն արեր է «Արեւելեան Ֆրանսայի Աշխարհագրական ընկերութեան» կեդրոնի՝ որ Նանսի է, ժողովասրահին մէջ, Հայաստանի պատմութեան, աշխարհագրութեան և գրականութեան վրայ։

Տիար Չերազի բանախօսութիւնը շատ լաւ տպաւորութիւն ունեցեր է ունկնդիրներուն վրայ ինչպէս կը գրեն տեղական լրագիրները որոնք մեծ գովեստով խօսած են հայազգի բրոֆէսէօրի մասին, իր կենսագրութենէ մի քանի տեղեկութիւններ հրատարակելով։

L'Est Républicain լրագիրն այս առթով հրատարակած յօդուածը վերջացուցած է հետեւեալ տողերով.

«Ինչպէս որ հաստատեց պ. նախագահը Տ. Ֆիւշ երբ Աշխարհագրական ընկերութեան կողմէն շնորհակալութիւն կը յայտնէր ճառախօսին, Տիար Մինաս Չերազ ոչ միայն ճանչցուց մեզ Հայաստանը, այլ և մեզ սիրել տուաւ զայն։

«Տ. Նախագահը նիստը վերջացնելէ առաջ իմացուց որ Տ. Մինաս Չերազ անդամ նշանակուած է Ֆրանսայի «Արեւելքի Աշխարհագրական Ընկերութեան» (Société de Géographie de l'Est)։

ԲԱՂԷՇԻ ՊԱՇՏՕՆԱՆԿ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԹԱՀՍԻՆ ՓԱՇԱՆ

Բաղէշի պաշտօնանկ նահանգապետ Թահսին փաշան, Սասունի կոտորածի հեղինակներէ մին, Տիգրանակերտի, Հալէպի և Ալէքսանդրէթի (Իսքէնտէրուն) ճանապարհով հասած է արդէն կ.պոլիս։ Շոգենաւէն դուրս եկնելուն պէս ուղղակի կայսերական պալատն երթալով Սուլթանին ներկայանալու պատիւն ունեցեր է։

Թէ՛ Տիգրանակերտի մէջ և թէ՛ իր անցած ուրիշ տեղեր բացարձակ համակրութեան ցոյցեր և պատիւներ եղեր են Թիւրք իշխանութիւններուն և ժողովուրդներուն կողմէն։ Տիգրանակերտի վալին ամեն յարգանք չտալներ է իրեն. ի պատիւ իրեն ղօրահանդէս եղեր և խլամութեան իրրեւ մի դիւցազն, իբրեւ մի նահատակ, պատիւներ տուեր են իրեն։ Այս լուր շատ դէշ տպաւորութիւն ունեցեր է Կ.պոլսի եւրոպական դեսպաններուն վրայ։

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՋ

«Սէվաճիօր»ի թղթակիցը Կ.պոլսէն մարտ 8ին կը գրէ թէ 15 օրի չափ առաջ ծանր անկարգութիւններ պատահեր են Տիգրանակերտի մէջ։ 30ի չափ Քիւրտեր որոնք դիւղերէն քաղաք եկած էին, չուկային մէջ յարձակեր են Հայերուն վրայ և վանոնք ծեծելով կիսամեռ վիճակի մէջ թողուցեր են։

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼՐԱՏՎԱԿԱՆ

Մոսկվայի օտարազգի գրաքննության կոմիտեն արգելել է մտցնել Ռուսաստան հետևյալ գրքերը.

Ա. Ֆրանսի «Ժերոմ Կոտենոյի պատմությունը»։

Ա. Ֆրանսի «Ժան Սերվուազ

թալի Հանրապետութեան մէջ դարձեալ յաջողեցան նոր բանակներ կազմելու, այնպէս որ այս ժամուս նոքա 8-10,000 հոգի պատրաստ զէնքի տակ ունին և օրէցօր իրենց նորէն յարձակման լուրերուն կ՚սպասուի :

ԱՐՄԷՆԻՈ

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերը կարելի է ըստանալ Արմենիահ խմբագրատունէն իրենց առջեւ նշանակուած գիներով որոնց մէջ հաշուուած է և դրկելու ֆոստի ծախքը :

Հ. Բարսեղ Տարգիսեան, Ուսում ան ասիրութիւն Մանիքեա Պաւղիկեան Թոնդրակեցիներու ազանդին և Գր. Նարեկացու Թուղթը (կրօնական նորելուկ գաղափարներուն տարածման պատճառով Հայաստանեայց ժողովրդենէ մէջ ծագած երկարատեւ և մեծ յուզումներուն մի առանձին ուսումնասիրութիւնն է որի մասին գրուած չկայ Հայոց պատմութեան գասագիրքերուն մէջ) :

2 ֆր. 20 սնթմ. :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԺԳ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՑԲԵՆԱՍԷՐ
(ՋԱՔԱՐԻԱ ՍԹՈՑԱՆՈՎ)

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ

Մ ԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

1894

Պուլկարիահ անկախութեան հերոսներէ մէկին, Ջաքարիա Սթոյանովի, որ իր ընդունակութեան և հայրենասիրական ոգեւորութեան շնորհով յաջողեցաւ մի լեռնաբնակ գիւղացի հովուի պարզ վիճակէն հետզհետէ արհեստաւոր, վարժապետ, յեղափոխական գործիչ, խմբագրապետ և վերջապէս ազատ Պուլկարիահ Ազգային ժողովին նախագահ դառնալ, խիստ հետաքրքրաշարժ կենսագրութիւն է, ուր ուշադրութեան արժանի տեղեկութիւններ կան նաեւ Պուլկարիահ Թիւրքի լուծէն ազատելու աշխատող պուլկար հայրենասէր յեղափոխականներու գործունէութեանը մասին: Սկիզբը դրուած է նաեւ հեղինակին, Բրօֆէսէօր Լուի Լէժէի, և Թարգմանչին միջեւ եղած թղթակցութիւնը այս գրքի հայերէն Թարգմանութեանն առթով :

Հեղինակը շատ իրաւամբ կը գրէ իր յառաջաբանի վերջ Թէ «Ջարմանք պիտի պատճառէ ինձ նէթէ ընթերցողներու հետաքրքրութիւնը չարժի պետական մարդ դարձած մի գիւղացու այս վաւերական պատմութեան վրայ :»

Գինն է փոստի ծախքով մէկտեղ 1 ֆրանգ և 40 սանթիմ :

Տարածելու համար մեծ քանակու-

թեամբ առնողներուն 25 % զեղչ կը լինի :

(Պարսկաստանի Հայերին համար 1 ֆրանգ է:)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ Է ՀԱՅՑ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ (1794-1894) ՅՈՒԲԵԼԻՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Այս պատկերը որ «Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրութիւնը հրատարակած է ներկայ 1894 թուականի Հայ ազգին մէջ լրագրի սկզբնաւորութեան դարադարձը լինելուն առթով, մեծ միաժամ դիրքով է լուսատիպ (phototypique), որի մեծութիւնն է 50 × 35 սանտիմետր, տպուած 70 × 45 սանտիմետր քարտոնի (carton) վրայ այլ և այլ բնագրով : Մէջ տեղը դրուած է հայ լրագրութեան հիմնադրին՝ Տ. Ցարութիւն Քհնյ. Շմաւոնեանի պատկերը, և բոլորտիքը՝ 1894ին հայերէն լեզուով հրատարակուող բոլոր լրագիրներուը իրենց խմբագրապետներու պատկերներով :

Գինն է 1 բրլ. 50 կպկ. կամ 4 ֆրանգ, ճանապարհածախով միասին: Պարսկաստանի համար 1 րբլ. ռսկն. կամ 2 ֆր. եւ 50 սնթմ.

Սոյն առթիւ կը յայտնենք որ լոյս տեսած է նաեւ

Գալէմքեարեան Հ. Գ., Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը: Հտր. Մ. 1794-1860. մէկ լուսատիպ պատկերով : Վիէննա Մխիթարեան տպարան 1893: Գինն՝ ճանապարհածախով՝ բրլ. 1 կամ 2 ֆր. և 50 սանթիմ :

Վերոգրեալ պատկերն ու գիրքը ստանալու համար, դիմել Վիէննա Մխիթարեան Պատուարժան Միաբանութեան որ հրատարակած է զանոնք :

Կարելի է նաեւ ստանալ զանոնք, դիմելով Արմենիահ խմբագրութեան:

ՀԱՑՈՑ ՀԱՑԲԵՆԱՍՏԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ Ա ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՏՈՒԻԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ համառօտ կերպով բացատրուած է Թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ ի՛նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու :

Կը խնդրուի առնել հայրենասէր Հայերէ իրենց շրջանի մէջ տարածել այս տետրակ : Մէկ անգամէն 50 օրինակ ծախու առնողին կը տրուի 5 ֆրանքով Հատին գինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 10 սանթիմ) :

Ինչպէս ամեն լրագիրներ, Արմենիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար. անոնք որ պէտք կունենան Արմենիահ միջոցով մեկի դիմում անել կամ մի բան յայտարարել, պատրաստ ենք ընդունելիրենց ծանուցումներ ըստ, լրագրական սովորութեան: Ծանուցումների գիները նշանակուած են Արմենիահ ճակատը, տառին վրայ հաշուելով. 1 երկաթագրի (գլխագիր) համար 2 սանդիմ և 1 բոլորգրի համար 1 սանդիմ: 3 անգամ դրուելիք ծանուցումի գինին վրայ 0/0ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ դրուելիք ծանուցումի գնի վրայ 0/0ի 30 զեղչ: Սակարկութիւն չընդունուիր :

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Տաճկական բռնութեան նահատակ եղող Խորէն Նարպէյ-Լուսինեանի Սբբազանի պատկերը ընտիր թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիահ խմբագրատունը : Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերուն վրայ ժամանաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներովը :

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Սպառած):
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԵԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՏՈՒՂՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՏՈՒՂՂԱՐ ԱՊՏԱՄԱՐՏԱՑ (Սպառած)

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(*Հայաստանցիներէն պանդխտութեան տխուր հետեւանքներէն մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացուցէ վիպական կերպով :*) Գինն (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.

Զ. ԳԱՄԱՌ ՓԱՔԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենից առարտեւուց (*Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս դրած ապառաժուածներէն ընտիր ո. ատանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են*) : 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ :

Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆԻԸ ՅԱՃԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ԹԻՒՐՔԻԱՅ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆՆԵՐ (*Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերին վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ : Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թուին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը :*) Գինն 50 սանթիմ (35 սանթիմ) :

Ինչպէս ամեն լրագիրներ, Արմենիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար. անոնք որ պէտք կունենան Արմենիահ միջոցով մեկի դիմում անել կամ մի բան յայտարարել, պատրաստ ենք ընդունելիրենց ծանուցումներ ըստ, լրագրական սովորութեան: Ծանուցումների գիները նշանակուած են Արմենիահ ճակատը, տառին վրայ հաշուելով. 1 երկաթագրի (գլխագիր) համար 2 սանդիմ և 1 բոլորգրի համար 1 սանդիմ: 3 անգամ դրուելիք ծանուցումի գինին վրայ 0/0ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ դրուելիք ծանուցումի գնի վրայ 0/0ի 30 զեղչ: Սակարկութիւն չընդունուիր :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերուն վրայ ժամանաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներովը :

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Սպառած):
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԵԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՏՈՒՂՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՏՈՒՂՂԱՐ ԱՊՏԱՄԱՐՏԱՑ (Սպառած)

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(*Հայաստանցիներէն պանդխտութեան տխուր հետեւանքներէն մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացուցէ վիպական կերպով :*) Գինն (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.

Զ. ԳԱՄԱՌ ՓԱՔԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենից առարտեւուց (*Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս դրած ապառաժուածներէն ընտիր ո. ատանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են*) : 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ :

Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆԻԸ ՅԱՃԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ԹԻՒՐՔԻԱՅ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆՆԵՐ (*Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերին վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ : Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թուին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը :*) Գինն 50 սանթիմ (35 սանթիմ) :

դարձած լինելով, այդ չրջանին էջ Մ Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ տպուածած են Ցուշարարի մէջ որ ուշ ածալ դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ) :
(1 ֆրանք) : 1 ֆր. 40 սանթիմ

Ժ. Վրէժ (*Պուլկարիահ մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացուցէ և ցոյց կուտայ Թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար*) : (15 սնթիմ) ,20 սնթմ.

ԺԱ. ԹՈՄԱՍ ԲՈՑԱՐԻՍ (*Ցուցադրած է մէկ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն. ներէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացուցէ և ցոյց կուտայ Թէ Ցուլերն ի՛նչպիսի միջոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար*), (0,15սանթիմ) ,20 սանթիմ,

ԺԲ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆԱՄԱԾՆԵՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ
ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ. բեւ նմոյշներ զանազան քաղաքներէ մէջ և զանազան ազգութիւններ տակիւրերեան գրած ոտանաւորներէն որոնք ժամանակին հրատարակուած չ լինելով կորսուած են այժմ: Այն մի քանի ոտանաւորներ որոնք երբեմն նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցրիւ և ցան կը գտնուին Կ. Պոլիս տպագրուած ազգային երգ ու արաններին մէջ՝ որոց վերստին տպագրութիւնն վաղուց արդէն արգիլուած է, և Ասիա և Արմենիա լրագիրներուն մէջ : Նմոյշներէ մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ Թէ այդ ոտանաւորներ ի՛նչ տպաւորութիւններէ տակ ներշնչուելով գրուած են: Գինն (10 սանթիմ) 15 սանթիմ :

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵՍԱՐԷՆ Ա ՒՆՈՒԱՆ Մի ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐՆԵՑ ԱՊԼՊԱՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացուցէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի Թէ անբարոյական մի հայր իւր ապականած վարքուբարքով որչա՛փ չարիքներու պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդւոյ ձեռքով սպանուած և անհետացած է աշխարհէ : Գինն 1 ֆրանգ , (75 սանթիմ) :

ՅՆՕՐԻՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : François CARRIÈRE

ՄԱՐՍԷԼ

Հայկական տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.